ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/99

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Արմավիր» ջրօգտագործողների ընկերություն

Մասնակից՝ «Արթուր Թորոսյան Ֆրեդիկի» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցում, տրակտորի ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5123-2020 գրությամբ «Արթուր Թորոսյան Ֆրեդիկի» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Արմավիր» ջրօգտագործողների ընկերության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 03.04.2020թ.-ի գրության հիման վրա, 06.04.2020թ.-ին «Արթուր Թորոսյան Ֆրեդիկի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 06.04.2020թ.-ին:

06.04.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/99 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

15.04.2020թ.-ին և 30.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 15.04.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.04.2020թ.-ին:

2. «Արմավիր» ջրօգտագործողների ընկերության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Արմավիր» ջրօգտագործողների ընկերությունը 03.04.2020թ.-ին գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք ձեզ, որ «Արմավիր» ՋՕ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար տրակտորի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից անհատ ձեռնարկատեր Արթուր Ֆրեդիկի Թորոսյանը (այսուհետ՝ Մասնակից) սահմանված ժամկետում Ընկերությանը չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծը և պայմանագրի կատարման ապահովումը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արթուր Թորոսյան Ֆրեդիկի» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Արթուր Թորոսյան Ֆրեդիկի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 06.04.2020թ.-ին գրությամբ դիմել է «Արթուր Թորոսյան Ֆրեդիկի» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5123-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2020/99 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Արմավիր» ջրօգտագործողների ընկերության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից տրակտորի ձեռքբերման նպատակով 16.01.2020թ.-ին հայտարարվել է «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արթուր Թորոսյան Ֆրեդիկի» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 23.01.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Արթուր Թորոսյան Ֆրեդիկի» Ա/Ձ-ն գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից:

Պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից 15.04.2020թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

Պատվիրատուն 28.02.2020թ.-ին Մասնակցի՝ ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարությամբ նշված էլ. փոստի՝ enokyan.martin@mail.ru հասցեին է ներկայացրել «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնելով, որ «ԱՐՄ

ՋՕԸ ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու նպատակով «Արթուր Թորոսյան Ֆրեդիկի» Ա/Ձ-ի կողմից պետք է ներկայացվի պայմանագրի երկուական օրինակները և պայմանագրի կատարման ապահովում պայմանագրի գնի տաս տոկոսի չափով՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից 15.04.2020թ.-ին հրապարակվել է «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժինը չկայացած հայտարարելու որոշման մասին հայտարարություն, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, քանի որ նշված չափաբաժնի մասով «Արթուր Թորոսյան Ֆրեդիկի» Ա/Ձ-ի հետ պայմանագիր չի կնքվել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5123-2020 գրությամբ «Արթուր Թորոսյան Ֆրեդիկի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ

վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ «Արմավիր» ջրօգտագործողների ընկերության կողմից տրակտորի ձեռքբերման նպատակով 16.01.2020թ.-ին հայտարարված «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Արթուր Թորոսյան Ֆրեդիկի» Ա/Ձ-ն Հանձնաժողովի 23.01.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից՝ գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

Պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից 15.04.2020թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

Պատվիրատուն 28.02.2020թ.-ին Մասնակցի՝ ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարությամբ նշված էլ. փոստի՝ enokyan.martin@mail.ru հասցեին է ներկայացրել «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնելով, որ «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու նպատակով «Արթուր Թորոսյան Ֆրեդիկի» Ա/Ձ-ի կողմից պետք է ներկայացվի պայմանագրի երկուական օրինակները և պայմանագրի կատարման ապահովում պայմանագրի գնի տաս տոկոսի չափով՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից 15.04.2020թ.-ին հրապարակվել է «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժինը չկայացած հայտարարելու որոշման մասին հայտարարություն, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, քանի որ նշված չափաբաժնի մասով «Արթուր Թորոսյան Ֆրեդիկի» Ա/Ձ-ի հետ պայմանագիր չի կնքվել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արթուր Թորոսյան Ֆրեդիկի» Ա/Ձ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը և պայմանագրի ապահովումը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5123-2020 գրությամբ «Արթուր Թորոսյան Ֆրեդիկի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/99 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Արթուր Թորոսյան Ֆրեդիկի» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ